



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ _____ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության _____ մարզի
_____ համայնք, հասցե, հեռախոս, էլ. փոստ

ՆԱԽԱԳԻԾ

ՈՐՈՇՈՒՄ

«___» _____-ի 20__ թվականի N___-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱԶԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետի պահանջով,

_____ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Հաստատել «Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ներկայացուցչի թեկնածությունը ներկայացնելու և համաձայնեցնելու կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (___)	Դեմ (___)	Ձեռնպահ (___)
_____	_____	_____
_____	_____	_____
_____	_____	_____
_____	_____	_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____

(Կ. Տ.)

ԿԱՐԳ

ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են բազմաբնակավայր համայնքի կազմում ընդգրկված, համայնքի կենտրոն չհանդիսացող և 100-ից ավելի հաշվառված բնակիչ ունեցող բնակավայրի վարչական ներկայացուցչի թեկնածուին առաջադրելու, նրա թեկնածությունը տվյալ բնակավայրի բնակիչներին ներկայացնելու և նրանց հետ համաձայնեցնելու, ինչպես նաև այդ գործընթացի արդյունքների վերաբերյալ համայնքի ավագանուն տեղեկատվություն տրամադրելու հետ կապված իրավահարաբերությունները:

II. ՎԱՐՉԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ, ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

2. Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ներկայացուցչի թեկնածուին սեփական հայեցողությամբ առաջադրում է համայնքի ղեկավարը՝ առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներով:

3. Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ներկայացուցչի թեկնածությունը այդ բնակավայրի բնակիչներին ներկայացնելու և նրանց հետ համաձայնեցնելու համար տվյալ բնակավայրում իրականացվում են մեկ կամ ավելի հանրային քննարկումներ:

4. Հանրային քննարկումները իրականացվում և ամփոփվում են համայնքի ավագանու կողմից հաստատված «Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգով» սահմանված՝ հանրային քննարկումների իրականացման ընթացակարգով:

5. Վերոնշյալ նպատակով կազմակերպվող հանրային քննարկումներին կարող են մասնակցել տվյալ բնակավայրի շահագրգիռ բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձինք:

6. Հիմնվելով համայնքի կազմում ընդգրկված բնակավայրում իրականացված հանրային քննարկումների արդյունքների վրա՝ համայնքի ղեկավարը կարող է՝

ա. նշանակել վարչական ներկայացուցիչ իր կողմից առաջադրված և տվյալ բնակավայրի բնակիչների հետ համաձայնեցված թեկնածուին.

բ. առաջադրել տվյալ բնակավայրի վարչական ներկայացուցչի նույն թեկնածուին ոչ ավելի, քան երկու անգամ.

գ. առաջադրել տվյալ բնակավայրի վարչական ներկայացուցչի նոր թեկնածու:

7. Վերջին երկու դեպքերում տվյալ բնակավայրի վարչական ներկայացուցչի թեկնածությունը բնակավայրի բնակիչներին ներկայացնելու և նրանց հետ համաձայնեցնելու համար համայնքի ղեկավարը այդ բնակավայրում կրկին իրականացնում է մեկ կամ ավելի հանրային քննարկումներ:

8. Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ներկայացուցչի թեկնածությունը ներկայացնելու և համաձայնեցնելու նպատակով հանրային քննարկումների իրականացումը ֆինանսավորվում է համայնքի բյուջեից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԹԵՎՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱԶԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» _____ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

_____ համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետի պահանջի կատարումն ապահովելու նպատակով:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԹԵՎՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱԶԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» _____ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ներկայացուցչի թեկնածությունը ներկայացնելու և համաձայնեցնելու կարգը հաստատելու մասին» _____ համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԹԵՎՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱԶԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» _____ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ _____ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ներկայացուցչի թեկնածությունը ներկայացնելու և համաձայնեցնելու կարգը հաստատելու մասին» _____ համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ կառաջանա համայնքի բյուջեում նոր ծախսերի նախատեսման անհրաժեշտություն՝ կապված համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերում հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման հետ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____